

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՆ Ն թիվ 1

2011թ. փետրվարի 25-ին կայացած Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի խորհրդի նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. 2010/2011 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքները:
/Ձեկ. Ա.Գրիգորյան/
2. Պետական քննությունների, ավարտական հաշվետվությունների և մագիստրոսական թեզի կազմակերպման, կատարման աշխատանքների ընթացքը ամբիոններում:
/Ձեկ. Վ.Վարդանյան/
3. Սոցիոլոգիական հարցման արդյունքների քննարկումը ամբիոններում:
/Ձեկ. ամբիոնի վարիչներ/
4. Աշխատանքային կարգապահությունը ֆակուլտետում:
/Ձեկ. Մ.Թորոսյան/
5. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ** - Գեկանի տեղակալ Վ.Վարդանյանի հաղորդումը 2010/2011 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքները վերաբերյալ:

Ձեկուցողը հանգամանորեն ներկայացրեց ֆակուլտետի աշխարհագրության և երկրաբանության բաժինների տարբեր կուրսերի ուսման առաջադիմությունը 1-ին կիսամյակում: Ձեկուցողը նշեց, որ ընդհանուր առմամբ 1-ին կիսամյակի ուսման առաջադիմությամբ համալսարանի մյուս ֆակուլտետների շարքում մեր ֆակուլտետը գրավում է միջին տեղ: Աշխարհագրության բաժնում 440 ուսանողից 128-ը ունի պարտք, ֆակուլտետում գերազանցիկ է 45 ուսանող: Երկրաբանության բաժնում պարտք ունի 62 ուսանող: Ընդհանուր 669 ուսանողից 64-ը գերազանցիկ է, 59-ը՝ լավ առաջադիմությամբ: Ցածր է առաջադիմությունը «Մաթեմատիկա», «Աշխարհագրության հիմունքներ» և «Բնակչության աշխարհագրություն» առարկաներից: Սերվիսի բաժնում առաջադիմությունը ցածր է Ա.Պոտոսյանի և Մ.Թորոսյանի առարկաներից: 4 ուսանող հեռացվել են համալսարանից անբավարար առաջադիմության պատճառով՝ 2-ը աշխարհագրության և 2-ը երկրաբանության բաժնից:

Ելույթներ - Ելույթ ունեցան Մ.Մանասյանը, Ա.Պոտոսյանը, Թ.Վարդանյանը, Մ.Գրիգորյանը, նշելով որ իրենց կողմից կարդացված առարկայից առաջադիմությունը ցածր է, քանի որ կան շատ ուսանողներ, որոնք շատ վատ են հաճախում դասերին, իսկ եկած ժամանակ անտարբեր են իրենց ընտրած մասնագիտության նկատմամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Վ.Վարդանյանի ելույթը 2010/2011 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ ընդունելի գիտություն:

2. Ամբիոնի վարիչների ուշադրությունը հրավիրել կարդացվող առարկաների ծրագրերի վրա, որպեսզի դրանք արտահայտեն տվյալ մասնագիտության ժամանակակից պահանջները:

3. Ուսումնական ծրագրերը պետք է մանրամասն քննարկվեն ամբիոններում, այնուհետև՝ ֆակուլտետի մեթոդխորհրդում:

2. **ԼՍԵՑԻՆ** – Վ.Վարդանյանի զեկուցումը պետական քննությունների, ամբիոններում ավարտական հաշվետվությունների և մագիստրոսական թեզի կազմակերպման, կատարման աշխատանքների ընթացքի վերաբերյալ: Ձեկուցողը նշեց, որ ամբիոններում հիմնականում բաժանված են ավարտական հաշվետվության և մագիստրոսական թեզի թեմաները, նշանակված են ղեկավարները: Այս հարցի վերաբերյալ խնդիրներ չկան:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն Վ.Վարդանյանի զեկուցումը պետական քննությունների, ամբիոններում ավարտական հաշվետվությունների և մագիստրոսական թեզի կազմակերպման, կատարման աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
2. Ամբիոնի վարիչների ուշադրությունը հրավիրել այն խնդրի վրա, որ ավարտական հաշվետվությունները և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը կատարվի ժամանակին և բարձր մակարդակով:

3. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի վարիչների զեկուցումը «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների վերաբերյալ:
Նշվեց, որ «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքները քննարկվել են ամբիոններում, որևէ արտակարգ դեպք չի գրանցվել:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ամբիոնի վարիչների զեկուցումը «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների վերաբերյալ ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ – Մ.Թորոսյանի ելույթը ֆակուլտետում աշխատանքային կարգապահության վերաբերյալ:
Ձեկուցողը նշեց, որ ընդհանուր առմամբ ֆակուլտետում աշխատանքային կարգապահությունը բավարար է: Դեկանատը ժամանակին նկատողություն է տալիս այն աշխատողներին և ուսանողներին, որոնք թերանում են իրենց կարգապահության մեջ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հրավիրել արհմբյուրոյի և ամբիոնների վարիչների ուշադրությունը՝ աշխատանքային կարգապահությունը ֆակուլտետում պատշաճ մակարդակի բարձրացնելու համար:
2. Հարկերում նշանակել հերթապահներ՝ ուսումնական պրոցեսը վերահսկելու համար:

5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ա/ ԼՍԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի զեկուցումը ամբիոնի հայցորդ Լ.Հակոբյանի ատեստավորման վերաբերյալ: Լ.Հակոբյանը տպագրության է հանձնել 2 գիտական հոդված, հանձնել է որակավորման քննություն «Ինֆորմատիկա» առարկայից:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ատեստավորել Լ.Հակոբյանին՝ հաշվի առնելով ատենախոսության թեմայով կատարված աշխատանքները:

բ/ ԼՍԵՑԻՆ – Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ Թ.Վարդանյանի հաղորդումը ամբիոնի ասպիրանտ Արեգ Կամոյի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի ասպիրանտ Արեգ Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Արցախի լանդշաֆտների բժշկա-աշխարհագրական գնահատումը» վերնագրով և գիտական ղեկավար նշանակել աշխ.գիտ.թեկնածու, դոցենտ Պետրոս Գարուչի Դավթյանին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝	Մ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԲԱՐՏՈՒՂԱՐ՝	Ա.Ս.ՍԱՐԴԱՐՅԱՆ